Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի << Ջրափիի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի դասվարի 11 դասաժամ (մայրենի 7 դասաժամ, մաթեմատիկա 4 դասաժամ), երաժշտություն (3 դասաժամ), առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում՝ (Ձև 1), 1 լուսանկար 3*4 չափի,
-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
-անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին » ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրկույքի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև5)
-այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
-ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույք:
- հրատարկված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
– ՀՀ կառավարության 2022 թ ապրիլի 28-ի թիվ 596–Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն, (մասնակցած լինելու դեպքում)
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024 թ դեկտեմբերի 10–ից մինչև 2024 թ դեկտեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00–ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ. դեկտեմբերի 26-ին ժամը 14:00-ին, ՀՀ Շիրակի մարզի Ջրափիի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Ջրափի, 7-րդ փ., շ. 19:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 34-35-39 հեռախոսահամարով:

<<Ջրափիի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ–ի տնօրեն՝ / Մ. Հովհաննիսյան /